ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

25 մայիսի 2020 թ.

քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության պետ Անի Ամիրշադյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 14-ի N 74-Լ հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կանոնադրության հիման վրա, և ‹‹Կոնվերս Բանկ›› ՓԲ ընկերությունը՝ ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ Արթուր Հակոբյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ բանկ), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պայմանագրում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

1) պարբերական դրամական վճարի գումար՝Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշման 3-րդ կետում նշված գումար.

2) բանկային հաշիվ՝Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով բանկում բացված սոցիալական ապահովության հաշիվ.

3) շահառու՝անձ, ում օրենքով վճարվում է պարբերական դրամական վճարի գումար (ում անվամբ բացվում է բանկային հաշիվ).

4) անձը հաստատող փաստաթուղթ՝

ա. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտ,

բ. օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օրենքով կամ միջազգային պայմանագրով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը (կացության կարգավիճակը) հաստատող փաստաթուղթ,

գ. փախստականի կարգավիճակ ունեցող անձի համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ:

2. Լիազոր մարմինը բանկին է տրամադրում սույն պայմանագրի N 1 ձևում նշված տեղեկատվությունը (այսուհետ՝ վճարման ցուցակ), այդ թվում՝ սոցիալական ապահովության հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները, իսկ բանկը, համապատասխան դրամական միջոցներն ընդունելու օրվան հաջորդող բանկային օրվանից ոչ ուշ, հանրային ծառայությունների համարանիշով կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքով նույնականացնում է շահառուին, ճշտում է շահառուի անվամբ բացված բանկային հաշվի առկայությունը և՝

1) շահառուի անվամբ բացված գործող բանկային հաշվի առկայության դեպքում՝ պարբերական դրամական վճարի գումարը մուտքագրում է այդ բանկային հաշվին.

2) շահառուի անվամբ գործող բանկային հաշվի բացակայության դեպքում՝ շահառուի անվամբ բացում է բանկային հաշիվ և պարբերական դրամական վճարի գումարը մուտքագրում այդ հաշվին:

3. Կողմերն անվերապահորեն ընդունում են, որ՝

1) շահառուն հաճախորդի (բանկային հաշվի տիրոջ) իրավունքներ է ձեռքբերում պարբերական դրամական վճարի գումարն իր անվամբ բացված բանկային հաշվին մուտքագրելու պահից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

2) շահառուի՝ իր բանկային հաշվին առկա միջոցները վճարվում են կանխիկ եղանակով կամ անկանխիկ եղանակով.

3) սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում շահառուն բանկային հաշիվը կարող է տնօրինել պարբերական դրամական վճարի գումարը ծառայության կողմից բանկին փոխանցելու օրվանից հետո՝ շահառուի և բանկի միջև բանկային հաշվի պայմանագիր կնքելու օրվանից.

4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջը (ոչ ուշ, քան վերջին անգամ բանկ ներկայանալու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը, անձամբ բանկ ներկայանալու միջոցով, Հայաստանի Հանրապետությունում լինելը հավաստելը) համարվում է շահառուի կողմից կատարված, եթե նա, անձամբ բանկ ներկայանալով, հայտարարություն է ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին կամ նույնականացվել է և ստորագրել որևէ այլ փաստաթուղթ: Պարբերական դրամական վճարի գումարն անկանխիկ եղանակով վճարելու համար դիմած շահառուի՝ վերջին անգամ բանկ ներկայանալու ամիսը հաշվարկվում է նրա տվյալները վճարման ցուցակով լիազոր մարմնի կողմից բանկին փոխանցելու (շահառուի անվամբ բանկային հաշիվ բացելու) ամսվանից սկսած.

5) բանկը, իր համար նախընտրելի միջոցներով, շահառուին տեղեկացնում է բանկային քարտի ժամկետը լրանալու մասին կամ անձամբ բանկ ներկայանալու միջոցով Հայաստանի Հանրապետությունում լինելը հավաստելու անհրաժեշտության մասին:

4. Բանկային հաշվին մուտքագրվում է բացառապես պարբերական դրամական վճարի գումարը:

5. Շահառուին վճարվող բոլոր պարբերական դրամական վճարների գումարները բանկը մուտքագրում է շահառուի անվամբ բացված նույն բանկային հաշվին:

6. Շահառուի բանկային հաշվին մուտքագրված պարբերական դրամական վճարի գումարները տնօրինելուն առնչվող հարաբերությունները, այդ թվում՝ վճարային քարտի սպասարկմանն առնչվող, կարգավորվում են շահառուի և բանկի միջև կնքված բանկային հաշվի պայմանագրով:

7. Բանկը կարող է շահառուներին մատուցել այլ լրացուցիչ ծառայություններ, որոնք ներառված չեն սույն պայմանագրի N 8 ձևով սահմանված՝ պարբերական դրամական վճարների գումարների վճարման համար սահմանված նվազագույն ծառայությունների (այսուհետ՝ հիմնական ծառայություններ) ցանկ, կամ հիմնական ծառայությունների համար սահմանել հատուկ պայմաններ, որոնք պետք է պակաս բարենպաստ չլինեն շահառուի համար:

8. Սույն պայմանագրի ձևերը և սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկատվությունները) լիազոր մարմնի և բանկի միջև փոխանակվում են էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված միջոցներով (CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով):

9. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունը բանկի կողմից լիազոր մարմնին մատուցված է համարվում նախորդ ամսվա ընթացքում վճարման արդյունքների մասին սույն պայմանագրի N 2 ձևով սահմանված տեղեկատվությունը պարունակող փոխադարձ հաշվարկների ակտի հաստատման պահից:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Կողմերն իրավունք ունեն՝

1) սույն պայմանագրով սահմանված կարգով դադարեցնելու պայմանագրի գործողությունը.

2) օրենքով սահմանված կարգով բողոքարկել մյուս կողմի գործողությունները և (կամ) անգործությունը.

3) իրականացնել օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ:

11. Բանկը պարտավոր է՝

1) համաձայն վճարման ցուցակի, հաշվի առնելով նաև սույն պայմանագրի 5-րդ կետի պահանջը՝ պարբերական դրամական վճարի գումարը սույն պայմանագրի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում մուտքագրել շահառուի գործող բանկային հաշվին, իսկ 2-րդ ենթակետում նշված դեպքում՝ շահառուի անվամբ վճարման ցուցակով տրամադրված տվյալների հիման վրա բացված բանկային հաշվին, դրամական միջոցների ընդունման օրվան հաջորդող աշխատանքային

օրվանից ոչ ուշ, եթե ավելի կարճ ժամկետներ նախատեսված չեն օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով.

2) լիազոր մարմնի՝ սույն պայմանագրի N 3 ձևով սահմանված տեղեկատվությունը պարունակող կարգադրության (պահանջի) հիման վրա, այն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ, դրանում նշված գումարի չափով, առանց շահառուի համաձայնության, նրա բանկային հաշվից հետգանձել միջոցները (բավարար միջոցներ չլինելու դեպքում՝ բանկային հաշվում առկա հասանելի մնացորդի չափով) և ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ միաժամանակ ապահովելով սույն պայմանագրի N 4 ձևով սահմանված տեղեկատվությունը լիազոր մարմին ներկայացնելը: Բանկը պատասխանատվություն չի կրում բանկային հաշիվ մուտքագրված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված այն գումարների համար, որոնք հաճախորդի (շահառուի) կարգադրության հիման վրա բանկային հաշվից դուրս են գրվել (ելքագրվել են)՝ մինչև լիազոր մարմնից սույն ենթակետում նշված կարգադրությունը (պահանջը) ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը լիազոր մարմնին տրամադրել սույն պայմանագրի N 5 ձևով սահմանված տվյալները (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջը չկատարած շահառուների վերաբերյալ).

4) մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը լիազոր մարմնին տրամադրել սույն պայմանագրի N 6 ձևով սահմանված տվյալները (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջը կատարած շահառուների վերաբերյալ).

5) շահառուի մահվան մասին տեղեկատվություն ստանալու օրվան (սույն պայմանագրի իմաստով՝ մահվան մասին տեղեկատվություն ստանալու օր է համարվում շահառուի մահվան վկայականը կամ դրա պատճենը բանկ ներկայացնելու օրը) հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ սույն պայմանագրի N 7 ձևով սահմանված տվյալները ներկայացնել լիազոր մարմին.

6) էլեկտրոնային եղանակով կամ շահառուի՝ բանկին անձամբ ներկայացրած պահանջի դեպքում անվճար տրամադրել նրա բանկային հաշվին մուտքագրված պարբերական դրամական վճարների գումարների մասին տեղեկատվություն (քաղվածք)՝ առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ.

7) շահառուին սպասարկել սույն պայմանագրի N 8 ձևով սահմանված՝ հիմնական ծառայությունների առավելագույն սակագների համաձայն.

8) շահառուին սպասարկել նաև այն դեպքում, երբ նա ներկայացնում է վճարման ցուցակում նշված՝ անձը հաստատող փաստաթղթից տարբեր այլ՝ անձը հաստատող վավերական փաստաթուղթ, եթե դրանով բանկը կարողանում է նույնականացնել այդ անձին:

12. Լիազոր մարմինը պարտավոր է՝

1) տվյալ ամսվա վճարման ցուցակը և բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին տրամադրելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ բանկի հաշվին փոխանցել վճարման ենթակա ամբողջ գումարը.

2) սույն պայմանագրով սահմանված դեպքերում բանկ ներկայացնել սահմանված ձևի կարգադրություն.

3) շահառուի մահվան մասին տեղեկատվություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ սույն պայմանագրի N 7 ձևով սահմանված տվյալները տրամադրել բանկին և դադարեցնել պարբերական դրամական վճարի գումարի վճարումը.

4) «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրեն հայտնի դարձած՝ բանկային գաղտնիք համարվող տեղեկատվության գաղտնիությունը:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

13. Բանկը սույն պայմանագրի 2-րդ կետով նախատեսված ծառայությունը մատուցում է անվճար:

14. Բանկը շահառուի անվամբ բանկային հաշիվ բացելու և սպասարկելու համար ծառայությունների վարձավճար չի գանձում:

IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

16. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

17. Սույն պայմանագիրը լուծվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում: Պայմանագիրը լուծելու վերաբերյալ առաջարկությունը մի կողմը մյուս կողմին ներկայացնում է պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն երկու ամիս առաջ:

18. Պայմանագիրը լուծելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնող կողմը պարտավոր է պայմանագիրը լուծելու մասին շահառուին պատշաճ կարգով ծանուցել պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ: Սույն պայմանագրի իմաստով պատշաճ կարգով ծանուցում է համարվում պայմանագիրը լուծելու մասին դիմումում նշված՝ հեռախոսահամարին հաղորդագրություն կամ էլեկտրոնային փոստի հասցեով տեղեկատվություն ուղարկելը կամ շահառուի բնակության վայրի հասցեով ծանուցելը:

19. Սույն պայմանագիրը լուծվում է լուծման օրվա դրությամբ պայմանագրով ստանձնած պարտավորությունները կողմերի կողմից պատշաճ կատարելու, ինչպես նաև չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասները լրիվ հատուցելու պայմանով:

20. Սույն պայմանագիրն իրավաբանական ուժ է ստանում այն կնքելու օրը և գործում է 2020 թվականի հուլիսի 1-ից,իսկ սույն պայմանագրի 21-րդ կետում նշված դեպքում՝ այդ կետում նշված համաձայնագրով նախատեսված՝ սույն պայմանագիրը կատարելու համար անհրաժեշտ ծրագրային ապահովումը ներդնելու օրը և գործում է անորոշ ժամկետով:

21. Ըստ անհրաժեշտության՝ սույն պայմանագիրը կատարելու համար անհրաժեշտ ծրագրային ապահովումը մշակվում և ներդրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող լրացուցիչ համաձայնագրի համաձայն՝ սույն պայմանագիրը կնքելու ամսվան հաջորդող 3-րդ ամսվանից ոչ ուշ:

22. Եթե կողմերը կնքել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշման 7-րդ կետի 1-ին ենթակետում նշված՝ անկանխիկ եղանակով վճարման ծառայությունների մատուցման պայմանագիր, որը սույն պայմանագիրն իրավաբանական ուժ ստանալու օրվա դրությամբ գործում է, ապա սույն պայմանագիրն իրավաբանական ուժ ստանալու օրվա դրությամբ այդ վճարման ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծվում է: Այս դեպքում շահառուի՝ վերջին անգամ բանկ ներկայանալու ամիս է համարվում նախկին պայմանագրի համաձայն վերջին անգամ բանկ ներկայանալու ամիսը:

23. Սույն պայմանագրի 22-րդ կետում նշված դեպքում, եթե սույն պայմանագիրն իրավաբանական ուժ ստանալու օրվա դրությամբ բանկում շահառուի անվամբ հաշիվը՝

1) բացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված՝ անկանխիկ եղանակով վճարման ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ այն համարվում է սույն պայմանագրով սահմանված կարգով բացված բանկային հաշիվ.

2) բացվել է այլ հիմքով, ապա պարբերական դրամական վճարի գումարը բանկը մուտքագրում է այդ հաշվին՝ մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջը կատարելու ամիսը ներառյալ: Այդ ժամկետից հետո բանկը սույն պայմանագրով սահմանված կարգով շահառուի անվամբ բացում է բանկային հաշիվ:

Վ. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն	‹‹Կոնվերս Բանկ›› ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 13	Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք.Երևան, Վ.Սարգսյան 26/1
Հեռ. 060-654-002	Հեռ. 010-51-12-11
Էլ. փոստ info@ssa.am	Էլ. փոստ post@conversebank.am ՀՎՀՀ 00000291
Ծառայության պետ՝ Անի Ամիրշադյան	**Գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ Արթուր Հակոբյան**
(ստորագրությունն և կնիքը)	(ստորագրությունն և կնիքը)

Ձև N 1
պարբերական դրամական վճարների
մասին պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՎՃԱՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ ՆԵՐԱՌՎՈՂ) ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԲԱՆԿԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).
2. Շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.
3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.
4. Պարբերական դրամական վճարի գործի համարը, պարբերական դրամական վճարի տեսակը և վճարման ենթակա գումարի չափը.
5. Շահառուի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը (առկայության դեպքում):

Ձև N2
պարբերական դրամական վճարների
մասին պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ՝ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԱԿՏ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).
2. Հաշվետու ամսվա տարեթիվը և ամիսը, որին վերաբերում է փոխադարձ հաշվարկների ակտը.
3. Հաշվետու ամսվա վճարման ցուցակներում ներառված շահառուների ընդհանուր թիվը.
4. Հաշվետու ամսվա վճարման ցուցակների հիման վրա վճարման ենթակա (բանկին փոխանցված) պարբերական դրամական վճարների ընդհանուր գումարը.
5. Այն շահառուների թիվը, որոնք հաշվետու ամսվա ընթացքում կատարել են պայմանագրի 3-րդ կետի 4-րդ ենթակետում նշված պահանջը.

6. Այն շահառուների թիվը, որոնք հաշվետու ամսվա ընթացքում չեն կատարել պայմանագրի 3-րդ կետի 4-րդ ենթակետում նշված պահանջը.

7. Հաշվետու ամսվա ընթացքում շահառուների բանկային հաշիվներին մուտքագրված պարբերական դրամական վճարների ընդհանուր գումարի չափը.

8. Պարբերական դրամական վճարների գործերի թիվը, որոնց բանկային հաշիվներից պարբերական դրամական վճարների գումարները հաշվետու ամսվա ընթացքում, լիազոր մարմնի համապատասխան կարգադրության հիման վրա, բանկը վերադարձրել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե (ըստ գանձապետական հաշիվների).

9. Լիազոր մարմնի կարգադրության հիման վրա հաշվետու ամսվա ընթացքում բանկի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձված պարբերական դրամական վճարների գումարների հանրագումարը:

Ձև N3
պարբերական դրամական վճարների
մասին պայմանագրի

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՄԲ (ՍԽԱԼ) ՎՃԱՐՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԲԱՆԿԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).

2. Շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4. Պարբերական դրամական վճարի գործի համարը, պարբերական դրամական վճարի տեսակը և վճարման ենթակա գումարի չափը.

5. Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված պարբերական դրամական վճարի տեսակը.

6. Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված (վճարման ցուցակով փոխանցված) պարբերական դրամական վճարի՝ վերադարձման ենթակա գումարի չափը.

7. Գանձապետական հաշիվը, որին պետք է փոխանցել (վերադարձնել) Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված գումարը:

Ձև N4
պարբերական դրամական վճարների
մասին պայմանագրի

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՄԲ (ՍԽԱԼ) ՎՃԱՐՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).
2. Շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.
3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձման ենթակա՝ պարբերական դրամական վճարի գործի համարը, պարբերական դրամական վճարի տեսակը և վճարման ենթակա գումարի չափը.
5. Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փաստացի փոխանցված (վերադարձված)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված պարբերական դրամական վճարի գումարի չափը.
6. Գանձապետական հաշիվը, որին փոխանցվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված պարբերական դրամական վճարի գումարը.
7. Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ (սխալ) վճարված պարբերական դրամական վճարի գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնելու օրը, ամիսը, տարեթիվը:

Ձև N5
պարբերական դրամական վճարների
մասին պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 928.9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋԸ ՏՎՅԱԼ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉԿԱՏԱՐԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).
2. Շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.
3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.
4. Պարբերական դրամական վճարի գործի համարը.
5. Վերջին անգամ բանկ ներկայանալու (բանկային հաշիվ բացելու համար շահառուի տվյալներն ստանալու) օրը, ամիսը, տարեթիվը, ստորագրած փաստաթղթի անվանումը:

Ձև N6
պարբերական դրամական վճարների
մասին պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 928.9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋԸ ՏՎՅԱԼ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՁԱՄԲ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒ- ՆՈՒՄ ԻՐԵՆՑ ԼԻՆԵԼԸ ՀԱՎԱՍՏԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).
2. Շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.
3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.
4. Պարբերական դրամական վճարի գործի համարը.
5. Բանկ ներկայանալու օրը, ամիսը, տարեթիվը, ստորագրած փաստաթղթի անվանումը:

Ձև N7
պարբերական դրամական վճարների
մասին պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՄԱՀԱՑԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).
2. Մահացած շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.
3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.
4. Պարբերական դրամական վճարի գործի համարը.
5. Շահառուի մահվան մասին տեղեկատվությունն ստանալու օրը, ամիսը, տարեթիվը.
6. Բանկային հաշիվ մուտքագրված՝ պարբերական դրամական վճարի տեսակը:

Ձև N8
պարբերական դրամական վճարների
մասին պայմանագրի

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ

Աղյուսակ

NN ը/կ	Ծառայությունների տեսակը	Առավելագույն սակագինը
1.	Բանկային (քարտային) հաշվի բացում և սպասարկում	անվճար
2.	Քարտերի թողարկում և տրամադրում	անվճար
3.	Բանկային (քարտային) հաշվից միջոցների կանխիկացում (տվյալ բանկի սպասարկման կետերում)	անվճար
4.	Քարտային հաշվից միջոցների կանխիկացում (այլ բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող սպասարկման կետերում)	0.5 %
5.	Քարտի արգելափակում և ապաարգելափակում (քարտապանի պահանջով)	անվճար
6.	Բանկոմատի միջոցով քարտի առգրավման դեպքում (բանկի	անվճար

	սեփական սպասարկման կետերում) քարտի վերադարձ	
7.	Բանկոմատի միջոցով քարտի առգրավման դեպքում (այլ բանկերի սպասարկման կետերում) քարտի վերադարձ	200 դրամ
8.	Գաղտնաբառի (PIN կոդի) վերականգնում	700 դրամ
9.	Քարտի վերաթողարկում (կորցնելու դեպքում)	900 դրամ
10.	Քարտային գործարքների վերաբերյալ ամսական քաղվածքի տրամադրում	անվճար
11.	Անկանխիկ վճարումների ապահովում	անվճար

Սույն աղյուսակի 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերում նշված ծառայությունները մեկ տարվա ընթացքում առաջին դեպքի համար մատուցվում են անվճար, իսկ մեկ տարվա ընթացքում յուրաքանչյուր հաջորդ դեպքի համար՝ աղյուսակում նշված սակագնի (միջնորդավճարի) համաձայն, եթե բանկն ավելի նպաստավոր պայմաններ չի առաջարկում:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 01-26

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության և «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության միջև 2020 թվականի մայիսի 25-ին կնքված «Սոցիալական ապահովության հաշվի» պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

ք. Երևան

ինը մարտի
երկու հազար քսանվեց թվական

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ լիազոր մարմին), ի դեմս Միասնական սոցիալական ծառայության պետ Ագնեսա Աղաբաբյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի թիվ 37-Լ հրամանով հաստատված Միասնական սոցիալական ծառայության կանոնադրության հիման վրա, և «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Բանկ)՝ ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Անդրանիկ Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Բանկ), երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Կողմերը որոշեցին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության և «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության միջև 2020 թվականի մայիսի 25-ին կնքված «Սոցիալական ապահովության հաշվի» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Պայմանագրի 1-ին կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությունում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով և ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ» պարբերությամբ.

«դ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ ժամանակավոր պաշտպանության տակ վերցված՝ փախստական ճանաչված անձանց համար՝ անձնագիրը (որն իր նկարագրով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ հաստատված անձնագրի նկարագրին, սակայն ծածկագիրը տպագրվում է (կամ տպագրված է) բացառապես 070 ծածկագրով) կամ ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականը:»,

2) Պայմանագրի 3-րդ կետի 4-րդ ենթակետում «փաստաթուղթ» բառից հետո լրացնել «կամ շահառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը հավաստել է բանկը» բառերով,

3) Պայամանագրի 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետով.

«3.1. Շահառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կողմից կարող է հաստատվել նաև առանց նրա բանկ ներկայանալու, եթե շահառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկը հաստատել է՝

1) բանկի աշխատակցի՝ Հայաստանի Հանրապետությունում շահառուի գտնվելու վայր այցելությամբ.

2) իր ներքին ընթացակարգերին համապատասխան՝ տեղեկատվատեխնիկական միջոցների կիրառմամբ (հաստատելով շահառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը).

3) համապատասխան հնարավորությունների առկայության դեպքում՝ առաքող կազմակերպության միջոցով:»:

Սույն կետում նշված՝ շահառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը հաստատելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են շահառուի և բանկի միջև կնքված բանկային հաշվի պայմանագրով:»,

4) Պայմանագրի 3-րդ կետի 5-րդ ենթակետում՝

ա) «ներկայանալու միջոցով» բառերից հետո լրացնել «կամ սույն պայմանագրի 3.1-ին կետով սահմանված կարգով» բառերով,

բ) «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով.

«6) բանկը լիազոր մարմնին տրամադրում է հետվճարի շրջանակներում տվյալ ամսում կենսաթոշակառուների կողմից կատարված անկանխիկ գնումների և վճարումների գործարքների ծավալների վերաբերյալ տվյալները՝ մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը: Նշված ժամանակահատվածում 1-ից ավելի անգամ տվյալներ տրամադրելու դեպքում հիմք է ընդունվում վերջինը: Ընդ որում, յուրաքանչյուր անգամ տրամադրվում են ամբողջական տվյալներ: Բանկային հաշիվը փակված լինելու կամ տեխնիկական պատճառներով գումարը հաշվին չփոխանցելու դեպքում շահառուի դիմումի հիման վրա հետվճարը վճարում է տվյալ բանկը՝ իր սահմանած եղանակով (կանխիկ կամ անկանխիկ): Այս դեպքում հետվճարը բանկին փոխանցելու ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում շահառուին չվճարվելու դեպքում բանկը գումարը վերադարձնում է պետական բյուջե.»:,

5) Պայմանագրի 3-րդ կետի 6-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-9-րդ ենթակետերով.

«7) բանկը, համապատասխան հնարավորությունների առկայության դեպքում, կարող է սուրհանդակային ծառայություններ մատուցելու լիազորություն ունեցող կազմակերպության (այսուհետ՝ առաքող կազմակերպություն) կամ իր աշխատակիցների միջոցով իրականացնել շահառուի՝ բանկի հաճախորդի (բանկային հաշվի տիրոջ) իրավունքներ ձեռք բերելու, վճարային քարտի առաքման համար անհրաժեշտ գործողությունները, եթե շահառուն՝

ա. 85 տարին լրացած կամ

բ. անկախ տարիքից՝ ֆունկցիոնալության խորը սահմանափակում ունեցող (1-ին խմբի հաշմանդամություն) կամ

գ. 75-85 տարեկան՝ ֆունկցիոնալության ծանր սահմանափակում ունեցող (2-րդ խմբի հաշմանդամություն) կամ

դ. անկախ տարիքից՝ տեղաշարժման սահմանափակում ունեցող այլ անձ է (ըստ ստացված տեղեկությունների).

8) սույն պայմանագրի 7-րդ ենթակետում նշված դեպքում, եթե օրինական ներկայացուցիչ չունեցող շահառուն օբյեկտիվ պատճառներով (առողջական ծանր վիճակ, ֆիզիկական խնդիրների առկայություն և այլն) չի կարող ստորագրել անհրաժեշտ փաստաթուղթը, ապա փաստաթղթի առաքումը կարող է կազմակերպվել հետևյալ եղանակներով՝

ա. առաքող կազմակերպության միջոցով՝ լիազոր մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ,

բ. բանկի ներկայացուցչի միջոցով՝ լիազոր մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ,

գ. լիազոր մարմնի ներկայացուցչի միջոցով՝ բանկի հետ համաձայնեցված դեպքերում և ընթացակարգով:

Նշված դեպքերում, շահառուի բանավոր կամաարտահայտության հիման վրա լիազոր մարմնի ներկայացուցիչը կազմում է փաստաթղթի բովանդակությանը համապատասխանող արձանագրություն, որն ըստ առաքման եղանակի ստորագրում են՝ լիազոր մարմնի ներկայացուցիչը և առաքիչը՝ սույն ենթակետի «ա» պարբերության դեպքում, լիազոր մարմնի ներկայացուցիչը և բանկի ներկայացուցիչը՝ սույն ենթակետի «բ» և «գ» պարբերությունների դեպքում: Սույն ենթակետում նշված կարգով կազմված և ստորագրված արձանագրության առկայության դեպքում փաստաթուղթը համարվում է ստորագրված շահառուի կողմից.

9) բանկային հաշվի պայմանագիրը շահառուի անունից կարող է կնքել կամ շահառուի անվամբ բացված սոցիալական ապահովության բանկային հաշվին առկա միջոցները դուրս գրելու կարգադրություն բանկին կարող է ներկայացնել նաև սույն պայմանագրի 6-րդ կետում նշված անձը:».

6) Կողմերը եկել են համաձայանության, մասնավորապես՝ Բանկն ընդունում է, որ Պայմանագրի 3-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված կարգով բանկի հաճախորդի (բանկային հաշվի տիրոջ) իրավունքներ է ձեռք բերում, նրա վճարային քարտն առաքվում է նաև այն դեպքում, երբ նա չի բավարարում այդ ենթակետերում նշված պայմաններին և՝

1) շահառուի համար վճարող բանկն ընտրվել է առանց նրա դիմումի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ծրագրային մոդուլի կիրառմամբ կամ

2) առկա է շահառուի՝ վճարման եղանակի փոփոխության (բանկի ընտրության) դիմում, սակայն կատարված չեն բանկի հաճախորդի (բանկային հաշվի տիրոջ) իրավունքներ ձեռք բերելու, վճարային քարտի առաքման համար անհրաժեշտ գործողությունները:»:

7) Պայմանագրի 12-րդ կետի 4-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) ոչ ուշ, քան տվյալ ամսվա վճարման ցուցակը ներկայացնելու օրը բանկին տրամադրել սույն պայմանագրի 3-րդ կետի 7-րդ ենթակետում նշված պայմաններին բավարարող շահառուների՝ սույն պայմանագրի N 9 ձևով սահմանված տվյալները:».

8) Պայմանագրի 13-րդ կետը «կետով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն պայմանագրի 3-րդ կետի 7-րդ ենթակետի,» բառերով.

9) Պայամանագրի 13-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին և 13.2-րդ կետերը.

«13.1. Սույն պայմանագրի 3-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված սուրհանդակային ծառայության ձեռք բերման դիմաց առաքող կազմակերպություններին վճարած գումարը լիազոր մարմինն ամբողջությամբ փոխհատուցում է բանկին: Տվյալ ամսվա համար բանկի կատարած ծախսերը լիազոր մարմինը փոխհատուցում է սույն պայմանագրի N 10 ձևով սահմանված՝ բանկի ներկայացրած հայտի հիման վրա, հայտը ներկայացնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

13.2. Սույն պայմանագրի 3-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված սուրհանդակային ծառայության ձեռք բերման սակագինը, որը կարող է տարբերակվել ըստ բնակավայրերի, նախապես համաձայնեցվում է լիազոր մարմնի հետ:».

10) Պայմանագրի N 2 Ձևի 5-9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Պարբերական դրամական վճարների գործերի թիվը, որոնց բանկային հաշիվներից պարբերական դրամական վճարների գումարները հաշվետու ամսվա ընթացքում, լիազոր մարմնի համապատասխան կարգադրության հիման վրա, բանկը

վերադարձրել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե (ըստ գանձապետական հաշիվների).

6. Լիազոր մարմնի կարգադրության հիման վրա հաշվետու ամսվա ընթացքում բանկի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձված պարբերական դրամական վճարների գումարների հանրագումարը.

7. Պարբերական դրամական վճարների գործերի թիվը (սույն ձևի 3-րդ և 5-րդ կետերի տվյալների տարբերությունը), որոնց բանկային հաշիվներին մուտքագրելու համար հաշվետու ամսվա ընթացքում բանկին պետական բյուջեից փոխանցվել են պարբերական դրամական վճարների գումարներ, սակայն դրանք բանկը վերադարձրել է (ըստ գանձապետական հաշիվների).

8. Հաշվետու ամսվա ընթացքում բանկին փոխանցված պարբերական դրամական վճարների և պետական բյուջե (ըստ գանձապետական հաշիվների) վերադարձված գումարների տարբերությունը (սույն ձևի 4-րդ և 6-րդ կետերի տվյալների տարբերությունը).

9. Հաշվետու ամսվա համար բանկին փոխանցված՝ փոխհատուցված ընդհանուր գումարը».

11) Պայմանագրի N 8 Ձևից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ N N 9-10-րդ Ձևերով՝

«Ձև N 9

պարբերական դրամական վճարների

մասին պայմանագրի

ՑԱՆԿ

ԿԱՐԳԻ 3-ՐԴ ԿԵՏԻ 7-ՐԴ ԵՆԹԱԿԵՏՈՒՄ ՆՇՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ԲԱՎԱՐԱՐՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ ՎՃԱՐՄԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՀԵՏ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԲԱՆԿԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).
2. Շահառուի անունը, ազգանունը, այդ թվում՝ նաև անգլերեն, առկայության դեպքում՝ հայրանունը.
3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.
4. Շահառուի ծննդյան օրը, ամիսը, տարին.
5. Շահառուի սեռը.
6. Շահառուի ծննդավայրը.
7. Շահառուի գրանցման վայրի հասցեն.
8. Շահառուի բնակության վայրի հասցեն.
9. Շահառուի հեռախոսահամարը.
10. Շահառուի էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում):

Ձև N 10

պարբերական դրամական վճարների

մասին պայմանագրի

ՑԱՆԿ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԴԻՄԱՑ ԱՌԱՔՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎՃԱՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ՝ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).
2. Առաքող կազմակերպությունների անվանումները.
3. Հաշվետու ամսվա տարեթիվը և ամիսը, որին վերաբերում է հայտը.
4. Հայտը ներկայացնելու օրը, ամիսը, տարին.
5. Հաշվետու ամսվա ընթացքում սուրհանդակային ծառայությունից օգտված շահառուների ընդհանուր թիվը, այդ թվում՝ ըստ առաքող կազմակերպությունների.
6. Հաշվետու ամսվա ընթացքում սուրհանդակային ծառայություն մատուցած շահառուներին վճարված պարբերական դրամական վճարների ընդհանուր գումարն, այդ թվում՝ ըստ առաքող կազմակերպությունների.
7. Հաշվետու ամսում սուրհանդակային ծառայությունների մատուցման սակագներն՝ ըստ բնակավայրերի և առաքող կազմակերպությունների».

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Պայմանագրի՝ սուրհանդակային ծառայությունների մատուցմանն առնչվող դրույթների գործողությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ շահառուն հանդիսանում է 85 տարին լրացած անձ կամ անկախ տարիքից՝ ֆունկցիոնալության ծանր սահմանափակում ունեցող (1-ին խմբի հաշմանդամություն) անձ կամ 75-85 տարեկան՝ ֆունկցիոնալության խորը սահմանափակում ունեցող (2-րդ խմբի հաշմանդամություն) անձ կամ անկախ տարիքից՝ տեղաշարժման սահմանափակում ունեցող այլ անձ (ըստ

օպերատիվ տեղեկությունների) և նրա տվյալները ներառված են բանկերին տրամադրված՝ 2026 թվականի փետրվար, մարտ ամիսների վճարման ցուցակներում:

3. Սույն Համաձայնագիրը կազմված է ինը էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի գտնվելու վայրը, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Միասնական սոցիալական ծառայություն	**«Կոնվերս Բանկ» ՓԲԸ**
ք. Երևան, Նալբանդյան 13	**ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1**
ՀՎՀՀ՝ 02505511	**ՀՎՀՀ՝ 00000291**
Էլ. փոստ info@socservice.am	**Էլ. փոստ post@conversebank.am**
Միասնական սոցիալական ծառայության պետ	**Գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ**
ԱԳՆԵՍԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ	ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ստորագրություն, կնիք	**ստորագրություն, կնիք**

Alisa Grigoryan

Digitally signed by Alisa Grigoryan
DN: cn=Alisa Grigoryan, o=Converse Bank CJSC, ou=General Legal Support Division, email=GrigoryanAlisa@conversebank.am, c=AM
Date: 2026.03.11 15:07:46 +04'00'

Liana Batikyan

Digitally signed by Liana Batikyan
DN: cn=Liana Batikyan, o=Converse Bank CJSC, ou=Leading specialist at General Legal Support Division, email=liana.batikyan@conversebank.am, c=AM
Date: 2026.03.11 15:05:59 +04'00'

Anna Galstyan

Digitally signed by Anna Galstyan
DN: cn=Anna Galstyan, o=Converse Bank CJSC, ou=Head of Banking Services Management Unit, Branch Support and Banking Services Management Division, email=Galstyan.Anna@conversebank.am, c=AM
Date: 2024.03.11 14:41:30 +04'00'